ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ես **Էլվինա Մարգարյանն** եմ, լինելով ՀՊՄՀ մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա ֆակուլտետի բակալավրի ծրագրի շրջանավարտ կանգնեցի երկընտրանքի առաջ. շարունակել կրթությունս այս ոլորտում, թե թողնել իմ ձեռքբերումներն այս ասպարեզում և սկսել սովորել ինձ համար ամբողջովին նոր՝ <<Կրթության կառավարում>> մասնագիտությամբ, որտեղ որոշ դասընթացներ դասավանդվելու էր անգլերեն լեզվով: Ես ընդունեցի այդ նոր մարտահրավերը, որի համար երբեք չեմ ափսոսա: Սկզբում որոշ դասերի յուրացումը՝ անգլերեն լեզվով լինելու պատճառով ինձ համար շատ դժվար էր, քանի որ համակուրսեցիներս փայլուն տիրապետում էին լեզվին՝ ի տարբերություն ինձ: Սակայն ես կարողացա ուժ գտնել և դասախոսական կազմի աջակցմամբ հաղթահարեցի լեզվական այդ խոչընդոտը և կարճ ժամանակահատվածում կարողացա այնպիսի աղյունք ցույց տալ, որ դարձա 2 ուսանողներից մեկը, ովքեր իրավունք ստացան անցկացնել իրենց պրակտիկան Լոնդոնի Middlesex համալսարանում: Այս ընթացքում ընտրվել եմ որպես ուսանող-փորձագետ որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից Վանաձորի պետական համալսարանի ծրագրային հավատագրմանը մասնակցելու նպատակով:

Աշխատանքային գործունեությունս սկսել եմ հենց ուսումնառության ընթացքում: Աշխատել եմ թե՛ համալսարանի ռազմավարական հարցերով, և թե՛ կրթության բարեփոխումներով ու որակի բարելավման ուղղությամբ աշխատանքներ իրականացնող վարչությունում: Աշխատանքային 4 տարիների ընթացքում մասնակցել եմ բազմաթիվ կոնֆերանսների, վերապատրաստումների, ինքս կազմակերպել եմ վերապատրաստումներ և հասկացել, որ կրթության լավագույն կառավարիչը պետք է զինված լինի նաև բիզնես կառավարման հմտություններով: Այդ իսկ պատճառով տեղափոխվելով ԱՄՆ կրթությունս շարունակեցի <<Բիզնես կառավարում>> (MBA) մասնագիտությամբ և միաժամանակ աշխատում եմ որպես հաշվապահ ամերիկյան կազմակերպություններից մեկում:

Հետագա հետաքրքրություններիս շրջանակը ներառում է կրթության ասպարեզում լավագույն վերլուծաբան-մասնագետ լինելը, որը իր հերթին պահանջում է հետագա ուսուցում և էլ ավելի ինքնակատարելագործում: Այս նպատակի իրականացման ճանապարհը սկսվեց հենց Կրթության կառավարում կրթական ծրագրի շրջանակում:

Հարգելի՛ դիմորդ, քեզ բարի երթ:

Հարգանքներով՝ **Էլվինա Մարգարյան**

Աստղիկ Յուրիկի Հովսեփյանն

Ողջույն հարգելի դիմորդ, ես **Աստղիկ Յուրիկի Հովսեփյանն եմ**, դասվար, ունեմ 15 տարվա աշխատանքային փորձ: Եթե որոշել ես շարունակել կրթությունդ և չգիտես, թե ուր դիմել, սիրով կներկայացնեմ իմ ընթացքը, դու փորձիր ճիշտ կողմնորոշվել:

Առաջնային համարելով հարատև կրթությունը՝ որոշեցի ստանալ նաև մագիստրոսի կոչում, իհարկե քայլերս տարան դեպի սիրելի և բոլորիս այդքան հարազատ հայկական պետական մանկավարժական համալսարան: Ես կանգ առա մի շատ հետաքրքիր ընտրության առաջ, համալսարանում արդեն իրականանում էր <<Կրթության կառավարում>> կրթական ծրագիրը և, քանի որ իմ նպատակը ևս համընկնում էր, միանշանակ կրթությունս շարունակեցի հենց այդ ամբիոնում: Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը, օտար լեզվով սովորելու և մեծ փորձ ձեռք բերելու պրակտիկ հնարավորությունները ստացածս կրթությունը դարձրին ինձ համար անգնահատելի:

Փոխվեց ամեն ինչ, երկու տարվա ընթացքում ձեռք բերած գիտելիքները սկսեցի օգտագործել տարրական դպրոցում, ստացա հեղինակային իրավունք, քանի որ մինչ այս ֆինանսական աշխարհի վերլուծության մեթոդը ոչ ոք չէր կիրառել դասագործընթացում: Ստացա 1-ին աստիճանի տարակարգ, օգտվեցի ընձեռված մեծ հնարավորությունից և պրակտիկ հանդիպումներ ունեցա ոլորտի տարբեր մասնագետների, տնօրենների հետ, ովքեր իրենց տարիների փորձը փոխանցեցին և կրթությունս տեսական դաշտից տեղափոխեցին դեպի գործնականը:

Բարձր միավորներով հաղթահարեցի տնօրենների հավաստագրումը: Գերազանցությամբ ավարտեցի, այժմ շարունակում եմ կրթությունս իմ սիրելի բուհում՝ ՀՊՄՀ-ում՝ որպես հայցորդ:

Ես և մեր այդքան մտերիմ, մեկ ընտանիք դարձած կուրսը՝ խորին շնորհակալություն ենք հայտնում ուսումնառության ընթացքում ունեցած հրաշալի օրերի և մեր սիրելի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից փոխանցած անգնահատելի գիտելիքների և կարողությունների համար:

Հարգելի՛ դիմորդ, քեզ բարի երթ:

Հարգանքներով՝ **Աստղիկ Հովսեփյան**

Ես **Հռիփսիմե Մարտինյանն** եմ: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախկին սան եմ: 2012թ-ին ընդունվել և 2016թ-ին ավարտել եմ Օտար լեզուների ֆակուլտետը (անգլերեն լեզու և գրականություն բաժինը): Այնուհետև սովորել եմ **Կրթության կառավարում** մագիստրոսի կրթական ծրագրով: Ուսումս ավարտելուց անմիջապես հետո (ի դեպ որոշ առարկաներ այստեղ դասավանդվում են անգլերեն լեզվով) ստացել եմ աշխատանքային առաջարկ ու մեկնել եմ Չինաստան: Այժմ ապրում և աշխատում եմ Չինաստանի ժողովրդական հանրապետությունում, որպես անգլերեն լեզվի ուսուցչուհի: Մասնագիտությունը որով աշխատում եմ՝ պահանջում է ոչ միայն գիտելիքների մեծ պաշար, այլ նաև կազմակերպչական և կառավարման ունակություններ: Այս հմտությունները ես ձեռք եմ բերել ուսումնառությանս տարիներին՝ իմ անչափ սիրելի ու հարգելի Կրթության կառավարում մասնագիտության դասախոսական կազմի շնորհիվ:

Լինելով Կրթության կառավարում մասնագիտության շրջանավարտ շնորհակալ եմ բոլոր այն դասախոսներին, ովքեր այս տարիների ընթացքում օգնել ու աջակցել են ինձ և բազում այլ ուսանողների:

Հարգելի՛ դիմորդ, քեզ բարի երթ:

Հարգանքներով՝ **Հռիփսիմե Մարտինյան**

Ողջույն ես **Մարիամ Նազարյանն եմ**: Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի շնորհիվ համալսարանի տարբեր ֆակուլտետներում սովորող 10 ուսանողներ հնարավորություն ստացան մեկնել Ֆինլանդիա և մասնակցել «ամառային ճամբար» կրթական և մշակութային ծրագրին: Մրցույթին մասնակցելու և հաղթելու համապատասխան ունակություններս զարգացրել եմ Կրթության կառավարում կրթական ծրագրի շրջանակում: Ծրագրի ընթացքում այցելեցինք Օուլուի պատմության թանգարան, ժամանակակից արվեստի ցուցասրահ, ինչպես նաև անմոռանալի և հեքիաթային ուղևորություն ունեցանք Լապլանդիա: Հետաքրքիր էր նաև մշակութային երեկոն, որի ընթացքում ներկայացրեցինք հայկական մշակույթն ու խոհանոցը, պարեցինք ազգային պարեր և ծանոթացանք խմբի մյուս մասնակիցների ազգային խոհանոցներին: Իսկ ինչ վերաբերում է ծրագրի կրթական մասին՝ շրջադարձային էր անձամբ իմ մասնագիտական ընկալման տեսանկյունից: Հրաշալի կրթական համակարգ, ժամանակակից պայմաններ՝ դասապրոցեսի արդյունավետության, խմբային աշխատանքների կազմակերպման համար, առողջ ապրելակերպ, ինքնուրույնություն և կրեատիվություն խթանող ծրագիր և մանկավարժական ուսանողակենտրոն մոտեցում: Այս ինֆորմացիան ստացանք շնորհիվ մեր սեմինարի, կրթական հաստատություններ այցերի և դպրոցների ղեկավարների հետ քննարկումների ընթացքում: Կցանկանայի խոսել Օուլու համալսարանում կազմակերպված քննարկումների մասին այնպիսի կրթական կարևոր հիմնահարցերի շուրջ, ինչպիսիք են կրթության էթիկան և մշակույթը, կրթության իրավունքը, դասավանման մեթոդները: Նշված առարկաները նաև դասավանդվել են Կրթության կառավարում ծրագրի շրջանակում, իսկ ստացած գիտելիքները հնարավորություն տվեցին ակտիվ մասնակցել քննարկումներին և լավագույնս ներկայացնել թեմաների վերաբերյալ ժամանակակից մոտեցումները:

Հարգելի՛ դիմորդ, քեզ բարի երթ:

Հարգանքներով՝ **Մարիամ Նազարյան**